

Իմա իմաստույթի գործածումը եւ դասակարգումը

Նախաբան

Ժամանակակից հայերենում իմա իմաստույթը գերազանցապես գործածվում է որպես բացահայտման շաղկապ, սակայն որպես այդպիսին չի դասակարգվում: Հիմնվելով բառարանային սահմանումների եւ արեւելահայերեն թվանշանային կորպուսից քաղված գործածման վիճակագրության հիման վրա, առաջարկվում է այն դասակարգել որպես բացահայտման շաղկապ:

Բառարանային սահմանումներ

Բառարաններում այն բնութագրվում է որպես իմանալ բայի գրաբար եզակի հրամայական ձեւը, բայց նշվում է, որ այն գործածվում է այսինքն, այն է իմաստով: Ահա մի քանի բառարանային մուտք՝

ԻՄԱ՛ (կրճատված հրամ. եղ. Իմանալ՝ի), գործ է ածվում իբրեւ բացատրական բառ, նշանակելով՝ այսինքն, ուզում եմ ասել (Մալխասեանց, 1944 : 786):

ԻՄԱ, (իմանալ բայի գրաբար եզակի հրամայականը), գործածվում է իմացիւ, այսինքն, այն է, ուզում եմ ասել, նկատի առ նշանակություններով գիտական խոսքի մեջ: Պ. Ա. դամյանը արդեն վաղուց (իմա, երբ մենք հայհոյում էին) սիրելի է դարձել մեր հասարակությանը (ՀԹ) (ԺՀԼԲԲ, հ.2, 1972 : 302):

ԻՄԱ, գրբ. հրամ. եղ. Իմանալ-ի. Գործածվում է առավել. գիտական եւ հրապարակախոսական ոճում իմացիւ, այն է, այսինքն նշ. (Աղայան, 1976 : 486):

Կորպուսային տվյալների վերլուծում

ԱՐԵՒԱԿ՝ Արեւելահայերենի Ազգային Կորպուսում իմա բառաձեւի որոնման արդյունքում ստացվեց 319 համատեքստ: Դրանց վերլուծության ընթացքում նույնացվեցին 41 վրիպակներով, 14 վիճելի կամ անհասկանալի գործածումներով, եւ 5 համանուններ համատեքստեր:

Գտնված 319 համատեքստերի 60 վրիպակների գերակշռող մասի (եթե ոչ բոլորի) պատճառը ցածրորակ տեսային ճանաչումն (OCR) է: Նույնանուններից չորսը երգ-

չունի իմա Սումակի (1922-2008) անունն է, իսկ մեկը՝ ԻՄԱ «Իրաքի միավորված ա-
լյանս»-ի հապավումը:

Վերլուծությունը ցույց տվեց¹, որ մնացած 259 համատեքստերում իմա իմաստույ-
թը գործածվում է այսինքն իմաստով: Այսինքն՝ եթե իմա-ն փոխարինվի այսինքն-ով, ա-
պա նախադասության թե՛ բովանդակությունը եւ թե՛ հաղորդումը չեն փոխվում:

Այս ամենը հաշվի առնելով նպատակահարմար է իմա իմաստույթը որպես բա-
ցահայտման շաղկապ դասակարգել:

Աղբյուրներ

1. Է. Աղայան, (1976). Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան». Ե.
2. ԱՐԵԻԱԿ՝ Արեւելահայերենի Ազգային Կորպուս. (2009) <http://www.eanc.net/>.
3. Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի Ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բա-
ցատրական բառարան, հ.2 (1972), չորս հատորով. Հայկական ՍՍՀ Գիտություն-
ների Ակադեմիայի Հրատարակչություն, Ե. 1969-1980:
4. Ս. Մալխասեանց, (1944). Հայերեն բացատրական բառարան. Հայկական ՍՍԻ
Պետական Հրատարակչություն. Ե.

¹ Վերլուծման մանրամասներով հեղինակը հաճույքով կկիսվի